

**ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ  
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Հայաստանի Հանրապետություն  
Երկու հազար տասնհինգ թվականի քսանմեկը դեկտեմբերի  
Բ. Գյումրի

Մենք՝ <<ՀՈՎԻԿ ԶԱԲԱՐՅԱՆ>> ՍՊԸ /իրավաբանական հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թբիլիսյան խճ., 46ա /ի դեմս տնօրեն՝ ՀՈՎԻԿ ՌՌԲԵՐՏԻ ԶԱԲԱՐՅԱՆԻ ծնված 08.03.1980թ., ՆԲՀ թիվ 000949388, ՀԾՀ թիվ 1803800169, տրված 21/01/2013թ., 016-ից, /հաշվառված ք. Գյումրի, Իսահակյան շ.8, բն. 8/այսուհետ՝ Վարձատու, մի կողմից և ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, ում անունից հանդես է գալիս լիազորված անձ/ լիազորագիր ՍՄ/ԱզԱ-1/11080-15 տրված 04.12.2015թ./, Ծառայության աշխատակազմի Գյումրու սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Սամվել Վանիկի Սկրոչյանը (անձնագիր՝ AK0566979, տրված 20.07.2010թ. 016-ի կողմից), այսուհետ՝ Վարձակալ, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

- 1.1. Սույն պայմանագրով «Վարձատուն» պարտավորվում է վճարի դիմաց «Վարձակալի» ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել 1.2 նշված գույքը
- 1.2. Վարձատուն պարտավորվում է վարձակալին հանձնել հետևյալ գույքը՝ ՕԲՅԵԿՏԻՑ ՏԱՐԱԾՔ 291.72քմ., լճնդ. Օգտագործման տարածք – 257.99քմ., ամբողջը բաղկացած է ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ –4353.96քմ., ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՍԱՍ - 0.20208հա., որը գտնվում է Գյումրի քաղաքի Խր. Հայրիկ փողոց, թիվ 46/1/քառասունվեց կոտորակ մեկ/ հասցեում ակունք /ԱՅՍՈՒՀԵՏ «ԳՈՒՅՔ»
- 1.3. Սույն պայմանագրի 1.2. –ում նշված <<ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ>>-ը սեփականության իրավունքով պատկանում է փոխատուին, համաձայն ՀՀ Կառավարությանն առընթեր աշխատակազմի Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գյումրի տարածքային ստորաբաժանման կողմից տրված թիվ № 0232833 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով. իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում գրանցված 18.04.2005թ. -ին :
- 1.4. Գույքը Վարձակալին պետք է հանձնվի սույն պայմանագիրը ստորագրելու պահից 1/մեկ/ օրվա ընթացքում:
- 1.5. Գույքը նախատեսված է օգտագործել որպես ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության Գյումրու սոցիալական ապահովության տարածքային բաժնի :
- 1.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Գույքի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

Սույն պայմանագիրը կնքելու պահին օբյեկտը վաճառված, նվիրված չէ, գրավ է դրված Կոնվերս Բանկ ՓԲԸ -ում, արգելանքի տակ է գտնվում, որը հաստատվում է ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի տարածքային ստորաբաժանման Գյումրի սպասարկման գրասենյակի կողմից տրված թիվ ՍՏ – 13112015-08-0306 միասնական տեղեկանքով, տեղեկանքում տվյալները լրացված են 13/11/2015թ. –ին, սակայն առկա է բանկի համաձայնությունը տրված 21/12/2015թ. –ին, թիվ տեղեկանք թիվ 0425 , որը պարունակում է հետևյալ դրույթը՝ <<Անշարժ գույքը գրավադրված է <<Կոնվերս Բանկ>>ՓԲԸ –ում, վարձակալը տեղյակ է Անշարժ գույքը գրավադրված լինելու մասին և պատրաստ է Բանկի առաջին իսկ պահանջով անվերապահորեն ազատել գրադեգրած տարածքը և պահանջը (գրավոր) ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում կյուծի անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը՝ միաժամանակ դադարեցնելով անշարժ գույքի նկատմամբ գրանցված իր օգտագործման իրավունքը>> :



## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը Վարձատուն պարտավոր է հանձնել հանձնման-ընդունման ակտով: Հանձնման-ընդունման ակտն ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:

2.2 Սույն պայմանագրի դրույթները տարածվում են կողմերի միջև երկու հազար տասնհինգ թվականի հոկտեմբերի տասնչորսից ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 10.11.2020թ. /տասը նոյեմբերի երկու հազար քսան թվականը/:

## 3. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի ամսական վարձավճարը կազմում է -300 000(երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումար, ներառյալ հարկատեսակները:

3.2 Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը Վարձակալը Վարձատուին է տրամադրում ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը, իսկ դեկտեմբեր ամսվա համար, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

3.3 Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 4.1 Վարձատուն պարտավոր է՝

4.1.1 Վարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին,

4.1.2 Օբյեկտը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.

4.1.3 Վարձակալած տարածքում ապահովել էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման անխափանությունը, իսկ իր մեղքով առաջացած թերությունների դեպքում, վերացնել դրանք ոչ ուշ քան 2 աշխատանքային օրվա ընթացքում:

4.1.4 Ոչ ուշ, քան երեք ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Օբյեկտն ազատելու անհրաժեշտության մասին.

### 4.2 Վարձատուն իրավունք ունի՝

4.2.1 Պահանջել Վարձակալից՝ Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

4.2.2 Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ՝ պահանջել վարձավճար կետանցի ողջ ժամանակահատվածի համար,

4.2.3 Վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Վարձակալն էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը, սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված կարգով, չափով և ժամկետներում չի վճարել վարձավճարը:

4.2.4. Վարձատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձակալին:

### 4.3 Վարձակալը պարտավոր է՝

4.3.1 Ժամանակին վճարել Օբյեկտն օգտագործելու համար վարձավճարը, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի վարձերը,

4.3.2 Ապահովել Վարձատուի անարգել մուտքը սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտ՝ դրա զննման և ստուգման համար,

4.3.3 սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին և Օբյեկտի նշանակությանը համապատասխան. 4.3.4 Ապահովել Օբյեկտի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը:

#### 4.4 Վարձակալը իրավունք ունի՝

4.4.1 Եթե Վարձատուն Վարձակալին հանձնել է սույն պայմանագրի 1.1 կետին չհամապատասխանող Օբյեկտ, պահանջել հանձնելու համապատասխան Օբյեկտ կամ հրաժարվել հանձնված Օբյեկտից, իսկ եթե Օբյեկտի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը,

4.4.2 Օբյեկտը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի գրավոր համաձայնության դեպքում.

4.4.3 Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Օբյեկտին վերաբերող փաստաթղթերը:

4.4.4 Վարձակալը իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձատուին:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի (զրո ամբողջ հինգ տոկոսի) չափով:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված Օբյեկտի հանձնման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05%-ի (զրո ամբողջ և զրո հինգ տոկոսի) չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

5.4 Վարձակալի կողմից սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Վարձակալի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի (զրո ամբողջ և զրո հինգ տոկոսի) չափով:

5.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.7 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վարձատուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վարձատուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վարձատուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Վարձակալի ստացածով:

5.9 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

### 6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը



Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում՝ «Ոչ բնակելի տարածքի վարձակալության» պայմանագրով վարձակալության հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

## 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ երեսուն օրյա ժամկետում պետական գրանցման:

8.2 Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված են նոտարի կողմից և գրանցված են Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

8.3 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է համապատասխան նոտարական տարածքի նոտարական գործում, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մյուս օրինակը տրվում է ներակայացնելու Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ գրանցելու համար:

8.4 Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող կողմերը հայտարարեցին, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնադրում պայմաններով:

8.5 Պայմանագիրը կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից և պարզաբանվեցին օրենսդրությամբ գործող նորմերը:

8.6 Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները



Վարձակալ


ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայության  
Գյումրու տարածքային բաժին  
բ.Գյումրի Խր. Հայրիկ 46ա  
Հ/Հ 900011556355  
ՀՎՀՀ 05503074  
ՀՀ ֆինանսների նախարարության  
գործառնական վարչություն



Վ ա ր ձ ա տ ու

<<Հովիկ Չաքարյան>> ՍՊԸ  
հասցե՝ Խրիմյան Հայրիկ 46ա  
Հ/Հ 1930028567090100  
ՀՎՀՀ 05510481

<Կոնվերսանկ> ՓԲԸ Կոմայրի  
մասնաճյուղ



Հայաստանի Հանրապետության անունից  
Երկու հազար տասնհինգ թվականի  
Քսանմեկը դեկտեմբերի

Սույն պայմանագիրը հաստատված է իմ՝ Գյումրի նոտարական տարածքի նոտար՝  
**ՌՈՒԲԵՐՏ ՍՈՒԿՈՒՉՅԱՆԻՍ** կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեց իմ ներկայությամբ:

Կողմերի ինքնությունը, գործունեությունը նրա ներկայացուցչի լիազորությունները ինչպես նաև անշարժ գույքի  
նկատմամբ վարձատուի իրավունքերը ստուգված են:


ՀՀ քաղ. օրի. 611 հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները 30օրյա ժամկետում,  
գրանցման են ենթակա անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային  
ստորարժանումում:

**ԳՐԱՆՑՎԱԾ Է ՍԵՂԱՆԱՍՏՅԱՆՆՈՒՄԹԻՎ** 9581

ԳԱՆՉՎԱԾ Է ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ և ծառայության վճար համաձայն  
ՀՀ «Տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների

**ԳՅՈՒՄՐԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ**

**ՆՈՏԱՐ՝**









652





ՀԱՄԱՁԱՅԱՆԳԻՐ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**ք. Գյումրի, Հայաստան 22/12/2020 երկու հազար քսան թվականի  
դեկտեմբերի քսաներկու**


Մենք՝ «ՀՈՎԻԿ ՉԱՔԱՐՅԱՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, հասցե՝ Գյումրի ԹԲԻԼԻՍՅԱՆ 46Ա /գրանցման համար՝ 29.020.00944, ՀՎՀՀ՝ 05510481, ի դեմս տնօրեն՝ **ՀՈՎԻԿ ՌՈՔԵՐՏԻ ՉԱՔԱՐՅԱՆԻ**, որի անունից համաձայն լիազորագրի հանդես է գալիս **ՇԻՐԱԿ ԱՎԵՏԻԵԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ**, ծնված՝ **08/04/1938թ-ին**, ՀԾՀ՝ **1804380130**, անձնագիր՝ **AH0284090**, տրված՝ **021-ի կողմից, 18/01/2007թ-ին**, բնակության հասցե՝ **ՇԻՐԱԿ, ԱՄԱՍԻԱ, ՈՂՋԻ, 6 Փ., 4 Տ /լիազորագիրը տրված 01/12/2020թ. -ին, լիազորագիր թիվ 07/** և «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» հասցե՝ **ԿԵՆՏՐՈՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ. / 13**, գրանցման համար՝ **286.184.1024769**, ՀՎՀՀ՝ **02505511**, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Հարություն Գեվորգյանի, որի անունից համաձայն լիազորագրի հանդես է գալիս Ծառայության Գյումրու տարածքային բաժնի պետ **ԿԱՐԵՆ ԾԱՌՈՒԿԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ**, ծնված՝ **11/12/1978թ-ին**, ՀԾՀ՝ **2112780255**, անձնագիր՝ **AP0505317**, տրված՝ **064-ի կողմից, 16/07/2016թ-ին**, բնակության հասցե՝ **ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԱԲՈՎՅԱՆ Փ., 165 Տ /լիազորագիրը տրված Սոցիալական ապահովության ծառայության գլխավոր քարտուղարի կողմից 18/11/2020թ. -ին, լիազորագիր թիվ 02/12-1/25732-20/ կնքեցինք** սույն համաձայնագիրը հետևյալի մասին:



1. Մեր միջև 21/12/2015թ.-ին ըստ սեղանամատյանի թիվ 9581 կնքվել է վարձակալության պայմանագիր և գրանցվել է Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում / վարձակալության վկայական 29/01/2016թ. վկայական թիվ 29012016-08-0006/
2. Սույն համաձայնագրով 21/12/2015թ. -ին ըստ սեղանամատյանի թիվ 9581 պայմանագրում կատարում ենք հետևյալ փոփոխությունը՝  
  
Պայմանագրի 2.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ Վարձակալության ժամկետը երկարաձգել մինչև 25/12/2022թվականը/քսանհինգը դեկտեմբերի երկու հազար քսաներկու թվականը/:
3. Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 4/չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ: Որոնցից մեկը մնում է ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ Նոտարական տարածքում, իսկ մյուսները տրվում է կողմերին:
5. Սույն համաձայնագիրը գրանցման է ենթակա Հայաստանի Հանրապետության Կադաստրի Կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:
6. Սույն համաձայնագիրը համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

Որի համար ստորագրում ենք

1.  Արամ Գազարյան

2.  Զեյնեպ Բաբայան

Հայաստանի Հանրապետության անունից 22/12/2020 երկու հազար քսան թվականի դեկտեմբերի քսաներկու



Սույն համաձայնագիրը հաստատված է իմ ՀՀ «ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ» նոտարական տարածքի նոտար **ՌՈՐԵՐՏ ՏՈՒԿԻ ՍՈՒԿՈՒՅՑԱՆԻՍ** կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև նրանց ներկայացուցիչների լիազորությունները ստուգված են: Սույն համաձայնագիրը 30 /երեսուն/աշխատանքային օրյա ժամկետուն գրանցման է ենթակա Հայաստանի Հանրապետության Կադաստրի Կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում: **ԳՐԱՆՑՎԱԾ Է ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԹԻՎ -----6436**

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ` համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար **Ռորերտ Տուիկի Սուկուչյան**



216






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի  
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 20 հունվարի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Խրիմյան Հայրիկի փողոց 46/1 ակումբ

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր՝ 21.12.2015թ. սեղանամատյան թիվ 9581, համաձայնագիր անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ վավերացված 22/12/2020թ-ին գրանցամատյան թիվ 6436

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 20012021-08-0028, գաղտնաբառ՝ HYSJKINHAIJU

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի  
[www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	08-001-1248-0017-001	Ակումբ	291.72 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ընդհանուր օգտագործման տարածքի մակերեսը կազմում է՝ 257.99ք.մ.:  
Ժամկետը՝ մինչև 25/12/2022 թվականը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Կարեն  
Խաչատրյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Շիրակի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ավագ  
ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 20012021-08-0028, գաղտնաբառ՝ HYUJKINHAIJU

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի  
[www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով



ՀԱՄԱՁԱՅԱՆԳԻՐ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

**ք. Գյումրի, Հայաստան , 25/03/2021 երկու հազար քսանմեկ թվականի  
մարտի քսանհինգ**

Մենք՝ «ՀՈՎԻԿ ՉԱՔԱՐՅԱՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, հասցե՝ Գյումրի ԹԲԻԼԻՍՅԱՆ 46Ա /գրանցման համար՝ 29.020.00944, ՀՎՀՀ՝ 05510481, ի դեմս տնօրեն՝ **ՀՈՎԻԿ ՌՈԲԵՐՏԻ ՉԱՔԱՐՅԱՆԻ**, որի անունից համաձայն լիազորագրի հանդես է գալիս **ՇԻՐԱԿ ԱՎԵՏԻՔԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ**, ծնված՝ **08/04/1938թ-ին**, ՀԾՀ՝ **1804380130**, անձնագիր՝ **AH0284090**, տրված՝ **021-ի կողմից, 18/01/2007թ-ին**, բնակության հասցե՝ **ՇԻՐԱԿ, ԱՄԱՍԻԱ, ՈՂՁԻ, 6 Փ., 4 Տ /լիազորագիրը տրված 17/03/2021թ. -ին, լիազորագիր թիվ 02/** և «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» հասցե՝ **ԿԵՆՏՐՈՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ. / 13**, գրանցման համար՝ **286.184.1024769**, ՀՎՀՀ՝ **02505511**, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Հարություն Գեվորգյանի, որի անունից համաձայն լիազորագրի հանդես է գալիս Ծառայության Գյումրու տարածքային բաժնի պետ **ԿԱՐԵՆ ԾԱՌՈՒԿԻ ՄԱՆՆԱՍՅԱՆԸ**, ծնված՝ **11/12/1978թ-ին**, ՀԾՀ՝ **2112780255**, անձնագիր՝ **AP0505317**, տրված՝ **064-ի կողմից, 16/07/2016թ-ին**, բնակության հասցե՝ **ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԱԲՈՎՅԱՆ Փ., 165 Տ /լիազորագիրը տրված Սոցիալական ապահովության ծառայության գլխավոր քարտուղարի կողմից 16/03/2021թ. -ին, լիազորագիր թիվ 02/12-1/7500-2021/ կնքեցինք** սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Մեր միջև 21/12/2015թ.-ին ըստ սեղանամատյանի թիվ 9581 կնքվել է վարձակալության պայմանագիր և գրանցվել է Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում / վարձակալության վկայական 29/01/2016թ. վկայական թիվ 29012016-08-0006/

2 Սույն համաձայնագրով 21/12/2015թ. -ին ըստ սեղանամատյանի թիվ 9581 պայմանագրում կատարում ենք հետևյալ փոփոխությունը՝

Պայմանագրի 1.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խր. Հայրիկ փողոց, թիվ 46/1/քառասունվեց կոտորակ մեկ/ հասցեում գտնվող անշարժ գույքից վարձակալվող տարածք՝ 425,53քմ.(կից ներկայացված է վարձակալվող տարածքի հատակագիծը), ընդ. օգտագործման տարածք -257,99քմ. , ամբողջը բաղկացած է՝ հասարակական սեփականություն -4353,96քմ. , ՀՈՂԱՄԱՍ՝ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ -0,20208հա.:


Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ վարձավճար սահմանել 600.000/վեց հարյուր հազար/ՀՀ դրամ:

3 .Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:  
4. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 4/չորս/ օրինակից, որոնք

- ունեն հավասարազոր իրավական ուժ: Որոնցից մեկը մնում է ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ  
 Նոտարական տարածքում, իսկ մյուսները տրվում է կողմերին:
5. Սույն համաձայնագիրը գրանցման է ենթակա Հայաստանի Հանրապետության  
 Կադաստրի Կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:
  6. Սույն համաձայնագիրը համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

**Որի համար ստորագրում ենք**

1.  **Արամ Կոժարյան**

2.  **Զեյնեպ Ախաճյան**



**Հայաստանի Հանրապետության անունից** 25/03/2021 երկու հազար քսանմեկ թվականի  
 մարտի քսանհինգ

Սույն համաձայնագիրը հաստատված է իմ ՀՀ «ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ» Նոտարական  
 տարածքի Նոտար **ՌՈՒԲԵՐՏ ՏՈՒԿԻ ՍՈՒԿՈՒՅՅԱՆԻՍ** կողմից: Կողմերը համաձայնագիրը  
 ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև  
 նրանց ներկայացուցիչների լիազորությունները ստուգված են: Սույն համաձայնագիրը 30  
 /երեսուն/աշխատանքային օրյա ժամկետուն գրանցման է ենթակա Հայաստանի  
 Հանրապետության Կադաստրի Կոմիտեի համապատասխան տարածքային  
 ստորաբաժանումում: **ԳՐԱՆՑՎԱԾ Է ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԹԻՎ 7496**

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ  
 դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի  
 Հանրապետության օրենքների:

Նոտար

Ռոբերտ Տոլկի Սուկուչյան





26






## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 9 ապրիլի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Խրիմյան Հայրիկի փողոց 46/1 ակումբ

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր՝ 21.12.2015թ. սեղանամատյան թիվ 9581, համաձայնագիր անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ վավերացված 22/12/2020թ-ին գրանցամատյան թիվ 6436, համաձայնագիր անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ վավերացված 25/03/2021թ-ին գրանցամատյան թիվ 1406

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- Կադաստրային ծածկագիրը՝
- Մակերեսի չափը (հա)՝
- Նպատակային նշանակությունը՝
- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝
- Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 09042021-08-0011, գաղտնաբառ՝ VAUNGYUAZHJU

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի  
[www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	08-001-1248-0017-001	Ակումբ	425.53 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ընդհանուր օգտագործման տարածքի մակերեսը կազմում է՝ 257.99ք.մ.:  
Ժամկետը՝ մինչև 25/12/2022 թվականը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արկադի Բոյաջյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 09042021-08-0011, գաղտնաբառ՝ VAUNGYUAZHJU

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի  
[www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով



**ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

« \_\_\_\_\_ 20 թ.

N \_\_\_\_\_

Ձեր՝ 22.12.2022  
N 2682

**ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ  
ՊԱՐՈՆ ՍԱՐԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ**

**ՊԱՏՃԵՆԸ՝ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ  
ՀԱՇՎԱՊԱՀԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ**

**Հարգելի՛ պարոն Մինասյան,**

Միասնական սոցիալական ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն) ուղղված Ձեր գրության վերաբերյալ տեղեկացվում է հետևյալը.

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 612-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ վարձակալության պայմանագիրը կնքվում է պայմանագրով որոշված ժամկետով: 2-րդ մասի համաձայն՝ եթե վարձակալության ժամկետը պայմանագրում որոշված չէ, ապա վարձակալության պայմանագիրը կնքված է համարվում անորոշ ժամկետով: Այդ դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվելու վարձակալության պայմանագրից, այդ մասին մյուս կողմին մեկ ամիս առաջ, իսկ անշարժ գույքի վարձակալության դեպքում՝ երեք ամիս առաջ տեղեկացնելով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Անորոշ ժամկետով կնքված վարձակալության պայմանագիրը դադարեցնելու համար օրենքով կամ պայմանագրով կարող է սահմանվել տեղեկացման այլ ժամկետ:

Օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով:

«Հովիկ Զաքարյան» ՍՊ ընկերության և ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության ծառայության (ներկայումս՝ Միասնական սոցիալական ծառայություն) (այսուհետ՝ Կողմեր) միջև 2015 թվականի դեկտեմբերի 21-ին կնքվել է ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի 2.2-րդ կետի համաձայն՝ պայմանագրի դրույթները տարածվում են կողմերի միջև երկու հազար տասնհինգ թվականի հոկտեմբերի տասնչորսից ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում մինչև 10.11.2020 թվականը:

2020 թվականի դեկտեմբերի 22-ին Կողմերի միջև կնքված համաձայնագրի 2-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի 2.2-րդ կետով նշված վարձակալության ժամկետը երկարաձգվել է մինչև 25.12.2022 թվականը:

«Հովիկ Զաքարյան» ՍՊ ընկերությունը մինչև Պայմանագրի գործողության ժամկետի լրանալը տեղեկացվել է ժամկետի երկարեցման վերաբերյալ համապատասխան համաձայնագիր կնքելու անհրաժեշտության մասին: Ընկերության կողմից համապատասխան համաձայնագիր կնքելու ուղղությամբ ձեռնարկվել են գործողություններ, սակայն առկա խոչընդոտներով պայմանավորված նշված համաձայնագիրը չի կնքվել: Ընկերության կողմից գույքից նույն պայմաններով օգտվելու վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

Ըստ այդմ՝ ղեկավարվելով Օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով:

Միաժամանակ, անհրաժեշտ է վերոգրյալի վերաբերյալ ծանուցել Պայմանագրի կողմին:

12/30/2022

X 

ԱԳՆԵՍԱ ԱԴՆԱԲԱԲՅԱՆ

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

Signed by: AGHABABYAN AGNESA 8004770010

**Ա.ԱԴՆԱԲԱԲՅԱՆ**

Կատարող՝ իրավաբանական վարչության  
իրավական ապահովման բաժնի փորձագետ  
Ի.Մուրադյան  
հեռ. 060 654-099/431